

<<Կրթության որակ և համապատասխանություն>> երկրորդ վարկային
ծրագրի 2010 թվականի տարեկան հաշվետվություն

<<Կրթության որակ և համապատասխանություն>> երկրորդ վարկային ծրագիրը
բաղկացած է երկու բաղադրիչներից.

1. Հանրակրթության որակի բարելավում
2. Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն
կրթության բարեփոխումներին:

<< Հանրակրթության որակի բերելավում>> առաջին ենթածրագիրը ներառում է
հետևյալ չորս բաղադրիչները.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և
կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում
- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և
մասնագիտական զարգացման միջոցով
- Ուսումնական գործընթացում S<S-ի ներդրում
- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

<<Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության
բարեփոխումներին>> երկրորդ ենթածրագիրը ներառում է հետևյալ չորս
բաղադրիչները.

- Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում
- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի
ստեղծում
- Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի
ներդրմանը
- Աջակցություն մանկավարժական կրթության բարեփոխումներին:

<< Հանրակրթության որակի բերավաճում>> ենթածրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում.

Արագածոտնի մարզի 19 և Արարատի մարզի 22 համայնքների կրթական հաստատություններում ներդրվել են նախադպրոցական կրթության միկրոծրագրեր, որոնց իրականացումն ընթացքում է. 2010 թվականին կատարվել են համապատասխան տարածքների բարեկարգման աշխատանքները, հաստատությունները համալրվել են գույքով և սարքավորումներով, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և ԿԾԿ ԾԻԳ-ի աջակցությամբ <<Քայլ առ քայլ>> կազմակերպությունն իրականացրել է վերոնշյալ 41 հաստատությունների դաստիարակների վերապատրաստման աշխատանքները: Տարվա ընթացքում 41 հաստատությունները ստացել են շարունակական տեխնիկական աջակցություն ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցների կողմից:

2011 թվականին նախատեսվում է նախադպրոցական կրթության միկրոծրագրեր իրականացնել Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում: Այդ նպատակով նշված մարզերում 2010 թվականի նոյեմբերից սկսվել են խթանման աշխատանքները: Մարզային կրթության վարչության աշխատակիցների օժանդակությամբ ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցներն առաջին հանդիպումներն են ունեցել մարզպետների, համայնքների ղեկավարների, նախադպրոցական հաստատությունների և դպրոցների տնօրենների հետ:

➤ Կրթության որակի հետազոտ բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով

2011 թվականից ուսուցիչների վերապատրաստում իրականացնելու համար մշակվել և ԿԳՆ-ի քննարկման է ներկայացվել <<Դրամաշնորհներ՝ վերապատրաստումներ իրականացնող կազմակերպություններին և կրթական հաստատություններին>> ղեկավար ձեռնարկի նախագիծը:

Ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ՀՀ բոլոր մարզերից և Երևանի քաղաքապետարանից ստացվել և մշակվել են «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն պահանջվող, 2011 թվականին վերապատրաստման ենթակա ուսուցիչների տվյալները:

Դպրոցների տնօրենների կառավարման հմտությունների զարգացման ուղղությամբ վերապատրաստումներ իրականացնելու նպատակով ընտրվել է «Միջազգային կրթական գործընկերներ» բրիտանական կազմակերպությունը: Վերջինիս կողմից դպրոցների տնօրենների վերապատրաստման մոդուլների մշակման նպատակով ձևավորվել է համապատասխան աշխատանքային խումբ և ընտրվել է դասախոսական կազմ, որն անցել է վերապատրաստման 1-ին փուլը:

ԿԳ նախարարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի կողմից հետազոտություն և կարիքների գնահատում իրականացնելու համար ընտրվել է «Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ» ՍՊԸ-ն: Ներկայումս, պատահական ընտրությամբ ձևավորված ցանկում ընդգրկված Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի և Երևան քաղաքի մոտ 80 դպրոցներում կատարվում են ուսուցիչների վերապատրաստման կարիքների գնահատման աշխատանքներ և հետազոտություն:

➤ **«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումը ուսումնական գործընթացում»**

1. Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի ընդլայնում

Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի ընդլայնման ուղղությամբ իրականացվել են այցելություններ ՀՀ մարզեր՝ դպրոցների GPS կորդինատների ճշգրտման նպատակով, կազմվել է փոխկապակցման ենթակա դպրոցների ցանկը, որում ընդգրկվել են հիմնականում դժվարանցանելի և հեռավոր գյուղական համայնքներում գտնվող 414 դպրոցներ, մշակվել են դպրոցների փոխկապակցման նպատակով ընկերության ընտրության մրցութային փաստաթղթերը: Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի ընդլայնման աշխատանքները նախատեսված է ավարտել 2011 թվականի ընթացքում:

2. Բաց կրթական միջավայրի (պլատֆորմ) մշակում

Հաշվետու ժամանակաշրջանում բաց կրթական միջավայրի մշակման ուղղությամբ իրականացվել է միջազգային խորհրդատուի ընտրությունը և ս.թ. հունիսին կնքվել է պայմանագիր ընտրված փորձագետի հետ: Ս.թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է Կրթական միջավայրի մշակման նպատակով միջազգային խորհրդատուի առաջին այցը Հայաստան, որի ընթացքում միջազգային խորհրդատուն հանդիպել է շահագրգիռ կողմերի հետ, այցելել է Երևանում և մարզերում տեղակայված դպրոցներ, պատրաստել և շահագրգիռ կողմերի քննարկմանն է ներկայացրել կրթական միջավայրի մշակման և գործարկման միջազգային առաջավոր փորձը: Այցի ավարտին խորհրդատուն ներկայացրել է կրթական միջավայրի տեխնիկական հատկորոշիչների ցանկը: ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացվել է կրթական միջավայրի գործարկման հնարավորությունների բարելավման նպատակով այլընտրանքային լուծումների մշակումը, հիմնավորումը և ընտրությունը, որը հնարավորություն կընձեռի փոխկապակցման որակի տատանումների դեպքում ապահովել կրթական միջավայրի անխափան աշխատանքը մարզերում:

3. ԿԾԿ ԾԻԳ-ի ինտերնետային կայքի մշակում

ԿԾԿ ԾԻԳ-ի ինտերնետային կայքի մշակման և հետագա սպասարկման նպատակով ԿԾԿ ԾԻԳ-ի և «Հելլիքս Կոնսալտինգ» ՍՊԸ միջև կնքվել է պայմանագիր: ԾԻԳ-ի կայքը ներկայումս գործում է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1243-Ն որոշման 2-րդ կետի 2) ենթակետի համաձայն ԿԾԿ ԾԻԳ կողմից մշակվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական և հաղորդակցական նորարարական տեխնոլոգիաների տրամադրման ծրագիրը: Ներկայումս ծրագիրը գտնվում է քննարկման փուլում:

➤ Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

Այս բաղադրիչի շրջանակներում, ի թրվս այլ գործողությունների, նախատեսվում է իրականացնել ավագ դպրոցների գրադարանավարների վերապատրաստում: Այդ նպատակով ընտրվել է «Միջազգային կրթական գործընկերներ» բրիտանական կազմակերպությունը: Վերջինիս կողմից 2010 թվականի սեպտեմբերին, առաջին այցի շրջանակներում,

վերապատրաստման մոդուլների մշակման նպատակով ձևավորվել է համապատասխան աշխատանքային խումբ և ընտրվել է գրադարանավարներին վերապատրաստողների կազմ, որն անցել է վերապատրաստման 1-ին նախապատրաստական փուլը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ ԿԳ նախարարին են ներկայացվել ավագ դպրոցների գրադարանների համար նախատեսված կահույքի, համակարգչային և այլ սարքավորումների քանակներն ու տեխնիկական հատկորոշիչները: Վերակազմավորված 43 ավագ դպրոցների ռեսուրս-կենտրոնների համար անհրաժեշտ գույքը մատակարարվել է:

2010 թվականին իրականացվել են 2010 թվականին վերակազմավորված 43 ավագ դպրոցների հիմնական առարկաների մոտ 1000 ուսուցիչի վերապատրաստման դասընթացներ Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանում և Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանում: Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանում վերապատրաստումներն ընթացել են երկու փուլով՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ մարզերի, և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ Երևանի ավագ դպրոցների ուսուցիչների համար: Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանում վերապատրաստվել են միայն ավագ դպրոցների օտար լեզուների ուսուցիչները՝ մեկ փուլով:

<<Բոլոնիայի գործընթացի համարեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին>> ենթածրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են հեկյալ աշխատանքները.

➤ Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում

Որակի արտաքին ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ 2010 թ.-ի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Սկսվել է <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամին (ՈԱԱԿ) տեխնիկական աջակցություն տրամադրելու նպատակով միջազգային խորհրդատուի ընտրության գործընթացը:
- ՈԱԱԿ-ի կառավարման համակարգչային ծրագիր մշակելու նպատակով կազմակերպվել է գնանգշում, որի արդյունքում ամենացածր գին է առաջարկել <<ԷՍԷՖԷԼ>> ՍՊԸ-ն:

- Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի զարգացման վերաբերյալ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շահառուներին իրազեկելու նպատակով ս/թ սեպտեմբերի 22-23-ին կազմակերպվել է համաժողով՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման առկա խնդիրները և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով: Համաժողովին մասնակցել են ներկայացուցիչներ բուհերից, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից, տարբեր գերատեսչական և շահագրգիռ այլ կազմակերպություններից:

Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման ուղղությամբ 2010 թ.-ի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

2010 թ.-ին մշակվել է և ՀԲ-ի ու ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվել է «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման նպատակով պետական և ոչ-պետական բուհերին դրամաշնորհների տրամադրման» ղեկավար ձեռնարկը:

➤ ***Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ-ի) ստեղծում***

ՄԿԿՏՀ-ի տեխնիկական հատկորոշիչների մշակման նպատակով ընտրվել է խորհրդատու կազմակերպություն, որի հետ պայմանագիր է կնքվել 2010 թվականի նոյեմբերին:

Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը

Ուսանողական վարկերի համակարգի ձևավորում

Որպես բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումների մաս՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագիրը նախաձեռնություն է հանդես բերել մշակել ուսանողական վարկերի (ՈւՎ) համակարգ: ՈւՎ մշակման թիմի ձևավորման նպատակով ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից մշակվել է ՀԲ-ի համաձայնությունն է ստացել փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա ընտրվել են ՈւՎ մշակման թիմի տեղական և միջազգային ավագ խորհրդատուները, և կնքվել են պայմանագրեր վերջիններիս հետ:

ՈւՎ մշակման թիմի ազգային ավագ խորհրդատուի կողմից ուսումնասիրվել է միջազգային փորձը և պատրաստվել ամփոփ վերլուծական զեկույց: Ուսումնասիրություններ և վերլուծություններ են կատարվել նաև Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ներկա հիմնախնդիրների, ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման քաղաքականության, Հայաստանում ՈւՎ ներդրման քաղաքականության և վարկավորման տարբեր սցենարների մշակման ուղղությամբ: Արդյունքում մշակվել և ՀՀ ԿԳՆ-ի ու ԿԾԿ ԾԻԳ-ի հետ քննարկվել են ՈւՎ համակարգի ձևավորմանն առնչվող մի շարք փաստաթղթեր, մասնավորապես՝ «Ուսանողական վարկերի ներդրման հայեցակարգային դրույթները», «Ուսանողական վարկերի սխեմաների միջազգային փորձի ամփոփ զեկույց. համեմատական վերլուծություն», «Հայաստանի բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխման տեսակետ-առաջարկ», «Հայաստանում ուսանողական վարկերի ներդրման քաղաքականության ռազմավարությունը և զարգացման սցենարները», «Ուսանողական վարկերի ազգային սխեմայի նախագծումը Հայաստանում» և այլն: Մշակված փաստաթղթերի նախագծերի քննարկման և լրամշակման նպատակով ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից կազմակերպվել են հանդիպումներ շահագիգիռ մարմինների (նախարարությունների, բուհերի) պատասխանատուների և այլ շահառուների հետ: ՈւՎ մշակման թիմի համալրման նպատակով մշակվել և ՀԲ-ի համաձայնեցմանն է ներկայացվել բարձրագույն կրթության ֆինանսների մասնագետի աշխատանքային պարտականությունների նկարագիրը: ՈւՎ համակարգի մշակման և փորձնական ներդրման ուղղությամբ աշխատանքները շարունակելու և պլանավորելու նպատակով մշակվել է նաև հետագա աշխատանքների շրջանակը, գործողությունների մանրամասն ժամանակացույցը և ներկայացվելիք արդյունքները:

Կայուն ֆինանսավորման ռազմավարության մշակում

Բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները սկսվել են ՀՀ կառավարության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև ստորագրված Զարգացման քաղաքականության վարկային 2-րդ ծրագրով (ԶԲՎ2), որի շրջանակներում ընտրվել են մեկ միջազգային և երկու տեղական խորհրդատուներ: Վերջիններիս աջակցությամբ մշակվում է բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը (Ռազմավարություն), որի մշակման և հաստատման 2010-2011 թթ. աշխատանքային ծրագիրը հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով:

Ընտրված խորհրդատուների կողմից մշակվել և շահագրգիռ մարմինների հետ քննարկվել են բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումների հիմնական ուղղությունները, Ռազմավարության նախագծի նախնական տարբերակը և ռազմավարության մշակմանն առնչվող այլ անհրաժեշտ նյութեր /վերլուծություններ, հաշվարկներ ու առաջարկություններ/: Նախատեսված է Ռազմավարության մշակման աշխատանքները խորհրդատուների նույն թիմով շարունակել և ավարտել <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում: Բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության նախագծի վերջնական տարբերակը, շահագրգիռ մարմինների հետ քննարկումներից և լրամշակելուց հետո, կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ձևավորում

Բարձրագույն կրթության մեջ նորարարությունների խրախուսման, զարգացման ծրագրերի մշակման, ինչպես նաև բուհերում որակի բարձրացման նպատակով նախատեսվում է ստեղծել նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆՄՀ):

ՆՄՀ-ի ձևավորման նպատակով մշակվել են փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքները, ներկայացվել Համաշխարհային բանկի համաձայնեցմանը, որից հետո ընտրվել են մեկ միջազգային և երկու տեղական խորհրդատուներ:

➤ Աջակցություն մանկավարժական մասնագիտական կրթության բարեփոխումներին

Միջազգային ճանաչում ունեցող մանկավարժական կրթություն իրականացնող եվրոպական բուհի և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) միջև գործընկերային համաձայնագիր կնքելու նպատակով մշակվել է եվրոպական բուհի աշխատանքային պարտականությունների նկարագիր, կատարվել է կազմակերպության ընտրություն: Ընտրության արդյունքները ներկայացվել են ՀԲ հաստատման:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ՀՊՄՀ-ին և ՀՀ մանկավարժական բուհերին տրամադրել կահույք և համակարգչային տեխնիկա՝ բուհերի տեխնիկական հզորությունները բարելավելու նպատակով: Մշակվել են մանկավարժական բուհերին տրամադրվող համակարգչային սարքավորումների և կահույքի տեխնիկական հատկորոշիչները: Դրանց հիման վրա պարտաստվել են համակարգիչների և կահույքի գնման փաթեթները և ուղարկվել

ՀԲ հաստատման: Համապատասխան հայտեր ստանալու նպատակով հրապարակվել է հայտարարություն «Հայաստանի Հանրապետություն» և «Առավոտ» օրաթերթերում: Կահույք մատակարարող կազմակերպության ընտրության նպատակով ՀՀ ԿԳ Նախարարի հրամանով ստեղծվել է ընտրող հանձնաժողով: Ընտրության արդյունքների հիման վրա պատրաստվել է հաշվետվություն, որը հաստատվել է ՀԲ կողմից: